ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՀ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱ: ՀԱՅԱՍՏԱՆԻ ԿԵՆՍԱԲԱՆԱԿԱՆ ՀԱՆԴԵՍ
АКАДЕМИЯ НАУК АРМЯНСКОЙ ССР. БИОЛОГИЧЕСКИЙ ЖУРНАЛ АРМЕНИИ
XX, № 7, 1967

Ս. Գ. ՂԱԶԱՐՅԱՆ

ԾՆԻ ԺԱՄԿԵՏՆԵՐԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ ՈՉԽԱՐՆԵՐԻ ՊՏՂԱԲԵՐՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԱՌՆԵՐԻ ՄԹԵՐԱՏՎՈՒԹՅԱՆ ՎՐԱ

Ոչխարաբուծությունը մեր հանրապետության գյուղատնտեսական արտադրության կարևոր և բարձր եկամտաբեր ճյուղերից մեկն է, որի զարգացումն ընթանում է ոչխարների գլխաքանակի ավելացման, ցեղայնության բարելավման, մսի ու բրդի արտադրության բարձրացման ուղղությամբ։

Այդ գործում կարևոր տեղ է գրավում ոչխարների ծնի ռացիոնալ և առավել արդյունավետ ժամկետների սահմանումը։ Ոչխարաբուծության բնագավառում ներկայումս առաջավոր մեթոդ է հանդիսանում ոչխարների ձմեռային ծնի (հունվար-փետրվար) կազմակերպումը։

Հանրապետության տարբեր գյուղատնտեսական գոտիների առանձին տնտեսություններում ոչխարների ծնի տարբեր ժամկետների արդյունավետության վերաբերյալ 1962—1966 թվականների ընթացքում մեր կատարած ուսումնասիրությունները ցույց տվեցին, որ վաղ ծին (հունվար և փետրվար ամիսներ) կազմակերպող տնտեսություններում ավելացան ինչպես ոչխարների գլխաքանակը, այնպես էլ մսի ու բրդի արտադրությունը, ուստի զգալիորեն բարձրացավ տնտեսությունների շահութաբերությունը։

Մեծ հետաքրքրություն են ներկայացնում մայր ոչխարների պտղաբերության և նրանցից ծնված գառների մթերատվության վերաբերյալ վերջին հինգ տարիների ընթացքում կատարված ուսումնասիրությունների արդյունքները։

Բարձր պտղաբերությունը կարևոր տնտեսական ցուցանիշ է, որը թույլ է տալիս ապահովելու անասունների գլխաքանակի արագ աճն ու մթերքների արտադրությունը։

Հայաստանի տեղական ոչխարները աչքի չեն ընկնում բարձր պտղաբերությամբ։ Նույնը կարելի է ասել նրանց խառնացեղերի մասին։ Տեղական ոչխարների մոտ, նրբագեղմ ցեղերի համեմատությամբ, հատկապես ցածր է երկվորյակների և եռորյակների տոկոսը։ Մյուս կողմից՝ ոչխարների համեմատաբար ցածր պտղաբերությունը, բացի ցեղայնությունից, կախված է նաև կերային ու կլիմայական պայմաններից։ Հանրապետության կոլտնտեսություններում և սովխոզներում ոչխարների սերմնավորումը հիմնականում անց է կացվում կլիմայական համեմատաբար անբարենպաստ հոկտեմբեր-նոյեմբեր ամիսներին, երբ ոչխարները բարձրադիր լեռնային փարթամ արոտներից իջնում և օգտագործում են գյուղամերձ չորացած, աղքատ արոտները։ Հասկանալի է, որ նման պայմանները չեն կարող նպաստել պտղաբերության բարձրացմանը։

Ոչխարների պտղաբերության վրա բեղմնավորման ժամկետի ազդեցությունն ուսումնասիրելու նպատակով, վերը նշված թվականներին, մի շարք տնտեսություններում ոչխարների սերմնավորումը կազմակերպվեց այնպես, որպեսզի տարբեր հոտերում ծինը ստացվեր հունվարից մինչև մայիս ամիսը։

Ուսումնասիրությունները ցույց տվեցին, որ ավելի վաղ շրջանում (օգոստոս-սեպտեմբեր) կլիմայական բարենպաստ և ամառային առատ կանաչի օգտագործման պայմաններում, սերմնավորված մաքիները ապահովում են ավելի բարձր պտղաբերություն, քան ուշ սերմնավորվածները: Ընդ որում, որքան սերմնավորման (հասկանալի է և ծնի) ժամկետներն ուշանում են, այնքան բարձրանում է ստերջության տոկոսը: Այսպես, Սևանի գոտու Նորակերտ գյուղի կոլտնտեսությունում 1964 թվականի ապրիլին ծնած մաքիների ստերջությունը կազմել է 6,8%, իսկ հունվարին ծնած մաքիների մոտ այն կազմել է միայն 1,4%, 1965 թվականին, համապատասխանաբար՝ 8,5 և 1,5%, 1966 թվականին՝ 11,7 և 1,2%: Նշված գոտու Լիճք գյուղի սովխոզում վերջին տարիներում ապրիլյան ծնի ժամանակ ստերջությունը կազմել է 16%, իսկ հունվար-փետրվար ամիսներին՝ մոտավորապես 4 անգամ պակաս: Ալագյազի ոչխարաբուծական սովխոզում (Արարատյան հարթավայրի նախալեռնային գոտի) ձմեռային ծնի ժամանակ ստերջությունը, գարնանային ծնի ստերջության համեմատությամբ պակաս է եղել 2—3 անգամ, իսկ Հրազդանի սովխոզում՝ (կենտրոնական գոտի) ստերջության տարբերությունը նույն ժամանակում հասել է 3—4 անգամի:

Այսպիսով, ծնի արդյունքներից կարելի է եզրակացնել, որ օգոստոս և սեպտեմբեր ամիսներին զուգավորված մաքիներն ավելի շատ գառներ են ծնում, քան այն մաքիները, որոնց զուգավորումը կատարվում է հոկտեմբեր և, հատկապես, նոյեմբեր ամիսներին:

Տարբեր գոտիների բոլոր տնտեսությունների ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ ամառային պայմանների բարերար ազդեցության շնորհիվ ոչ միայն ցածր է սերմնավորված մաքիների ստերջությունը, այլև բարձր է նրանց բազմապտղաբերությունը: Այսպես, Զովունի գյուղի կոլտնտեսությունում 1964 թվականին զույգ են ծնել հունվարին ծնած մաքիների 11,1%-ը, փետրվարին՝ 2,6, մարտին՝ 0,8%-ը, իսկ ապրիլին ծնած մաքիները զույգ չեն ունեցել: Ալագյազի սովխոզում 1965 թ. հունվար-փետրվար ամիսներին ծնած մաքիների 10,2%-ը տվել են զույգ, իսկ մարտ-ապրիլ ամիսներին ծնածների մոտ այն կազմել է 6,4%, 1965 թվականին զույգ ծնած մաքիների թիվը համապատասխանաբար կազմել է 7,9 և 4,8%:

Ցածր ստերջության և բազմապտղաբերության շնորհիվ բազմաթիվ տնտեսություններում վաղ շրջանում ծնած մաքիների յուրաքանչյուր 100 գլխից ստացվել է 101—110 գառ, մինչդեռ ուշ ժամկետներում ծնած նույն թվով մաքիներից հազվադեպ է ստացվում 100 գառ:

Արտաքին միջավայրը բարերար ազդեցություն է գործում ոչ միայն վաղ շրջանում սերմնավորված մաքիների բեղմնավորման տոկոսի բարձրացման ու բազմապտղաբերության վրա, այլև այն մեծ ազդեցություն է թողնում սաղմի կարգացման վրա: Այսպես, օրինակ, Հրազդանի սովխոզի փորձնական խմբերում 1963 թ. հունվարին ծնված գառները ծնվելու պահին ունեցել են 3,15 կգ կենդանի քաշ, իսկ ապրիլին ծնվածները՝ 2,20 կգ կենդանի քաշ, 1964 թվականին համապատասխանաբար կշռել են 3,05 և 2,2 կգ: Զովունու կոլտնտեսությունում 1964 թվականի տարբեր ամիսներում ծնված գառներն ունեցել են հետևյալ միջին կենդանի քաշերը—հունվարինը՝ 3,35 կգ, փետրվարինը՝ 3,13, մարտինը՝ 2,86 և ապրիլինը՝ 2,67 կգ:

Պտղի հեռծննդյան զարգացման ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ որքան վաղ են ծնվում գառները, այնքան բարձր է նրանց կենսունակությունը։ Դրանում համոզվելու համար դիտենք Հրազդանի սովխոզում տարբեր ժամկետներում ծնված գառների աճման դինամիկան, որը բերված է աղյուսակ 1-ում։

Աղյուսակ 1

Մատղաշների օրական միջին քաշաճը (գրամներով)

Հասակային ժամանակաշրջանները	Հունվարյան ծին		Ապրիլյան ծին	
	արուներ	էգեր	արուներ	էգեր
Ծնվելուց մինչև 30 օրական	189	174	144	135
Մեկից-երկու ամսական	197	189	147	136
Երկուսից երեք ամսական	192	188	157	137
Երեքից-չորս ամսական	207	190	130	106
Չորս ամսականից մինչև մորից անջատելը	156	129	—	—
Ծնվելուց մինչև (օրերով)	150	150	120	120
Մորից անջատելը (գրամներով)	188	175	144	128

Աղյուսակ 1-ում բերված տվյալներից երևում է, որ հունվարին ծնված գառները մինչև մորից անջատելը տվել են ավելի բարձր աճ, քան տվյալ հասակի ավելի ուշ՝ ապրիլին ծնված գառները։ Ընդ որում այդ տարբերությունը մեկ օրվա հաշվով, ուսումնասիրված ամբողջ ժամանակաշրջանի համար արուների մոտ կազմել է 44 գ, էգերի մոտ՝ 47 գ։ Այլ կերպ ասած՝ հունվարին ծնված գառները ապրիլին ծնված գառների համեմատությամբ ապահովել են ավելի բարձր աճ՝ էգերը 37 և արուները 30%-ով։

Արագ աճի շնորհիվ վաղ ծնի գառները նույն ժամկետում ձեռք են բերում ավելի բարձր քաշ, որը երևում է աղյուսակ 2-ից։

Աղյուսակ 2

Մատղաշների կենդանի քաշը տարբեր ժամանակաշրջաններում (կգ)

Հասակային ժամանակաշրջանները	Հունվարյան ծին		Ապրիլյան ծին	
	արուներ	էգեր	արուներ	էգեր
Ծնվելու պահին	3,38	2,93	2,74	2,47
Մեկ ամսական	9,05	8,16	7,06	6,52
Երկու »	14,98	13,83	11,49	10,61
Երեք »	20,76	19,62	16,20	14,70
Չորս »	26,98	25,34	20,11	17,88
Մորից անջատելիս	31,68	29,22	20,11	17,88

Ավելի ինտենսիվ աճի շնորհիվ, հունվար ամսում ծնված գառները ձեռք են բերել ավելի բարձր քաշաճ, ընդ որում, եթե առաջին դեպքում չորս ամսական արու գառը կշռել է 27 կգ, ապա երկրորդ դեպքում՝ միայն 20 կգ, այսինքն, արուները ձեռք են բերել 7 և էգերը 7,5 կգ ավելի կենդանի քաշ, որ համապատասխանաբար կազմում է 35 և 42%։

Ինչպես հայտնի է, մայիսի կեսից մինչև հունիսի սկիզբը, երբ ոչխարները քշվում են դեպի բարձր լեռնային արոտավայրերը, եղանակը սովորաբար լինում է անկայուն, հաճախ անձրևային, օդի ջերմաստիճանը զիշերը խիստ

ընկնում է։ Նշված անբարենպաստ պայմաններն ավելի մեծ չափով ազդում են գարնանը ծնված համեմատաբար թույլ մատղաշների վրա, քանի որ ձմռանը ծնված գառները մինչև արոտ դուրս գալը աճելու բավական ժամանակ են ունենում, հետևաբար, նրանք արոտ են դուրս գալիս ավելի խոշոր, դիմացկուն և կայուն տարբեր հիվանդությունների նկատմամբ։ Դրա ապացույցն այն փաստն է, որ Հրազդանի սովխոզում 1963—1966 թթ. հունվարին ծնված գառների անկումը, մինչև մորից անջատելը, կազմել է 9%, իսկ ապրիլին ծնված գառներինը՝ 18%, Զովունու կոլտնտեսությունում ձմռանը ծնված գառներից կամ անկում չի եղել, կամ էլ այն կազմել է 0,8—1,9%, իսկ գարնանը ծնվածների մոտ անկումները կազմել են 3,1—11,7%։

Մատղաշների զարգացումը կարևոր ցուցանիշ է հանդիսանում ծնի լավագույն ժամկետի ընտրության գործում։ Այս գործոնի կարևորությունն այն է, որ, նայած մատղաշի զարգացման աստիճանին, սահմանվում են վերանորոգումից ավելի գլխաքանակը մսի հանձնելու ժամկետները։ Հայտնի է, որ մատղաշի աճը, նրա հասակի հետ կապված, դանդաղում է և գալիս է այնպիսի ժամանակաշրջան, երբ վերանորոգման պահանջից ավելի եղած գլխաքանակի հետագա պահպանումը դառնում է անօգուտ, կամ տնտեսության համար քիչ օգտավետ, քանի որ նրանց վրա կատարված հետագա ծախսերը չեն հատուցվում ձեռք բերած աճով։

Հայաստանի պայմաններում վերանորոգումից ավելի մատղաշները մեկ տարեկան հասակում չեն իրացվում։ Պատճառը գառների ցածր քաշն է մայրերից անջատելու ժամանակ (20—22 կգ) և մսուրային պահվածքի սկզբին (25—28 կգ)։ Դրա համար էլ մատղաշը պահվում է հաջորդ ձմռանը, իսկ քանի որ անբավարար կերակրման հետևանքով գարնանը նրանց քաշը համարյա չի անցնում աշնանային քաշից (երբեմն էլ ավելի պակաս է լինում), ուստի այն հանձնվում է 16—18 ամսական հասակում, մոտ 35—38 կգ կենդանի քաշով (1950—1966 թթ. Հանրապետությունում իրացված ոչխարների բոլոր սեռահասակային խմբերի միջին կենդանի քաշը տատանվել է 36—41 կգ սահմաններում)։ Այլ խոսքով՝ մատղաշի մեկ տարի ավելի պահպանումը (ծնված տարվա աշնանից մինչև մյուս տարվա աշունը) տալիս է միայն 10—12 կգ քաշաճ, որը բոլորովին շահավետ չէ տնտեսության համար։

Մյուս կողմից՝ վերանորոգման գլխաքանակից ավելի մատղաշների պահպանումը խոչընդոտում է ոչխարների մայրական կազմի ավելացմանն ու նրա տեսակարար կշռի բարձրացմանը։

Գառների քաշի ավելացումը հնարավորություն կտա աշնանը իրացնելու վերանորոգումից ավելի պահվող մատղաշը, որով մսի ընդհանուր արտադրության մեջ կավելանա գառան մսի արտադրությունը, ինչպես նաև կպակասի ձմեռող անասունների գլխաքանակը և հնարավորություն կստեղծվի ձմռանը ոգալի չափով բարելավելու անասունների կերակրման պայմանները։

Տարբեր ժամկետներում ծնված գառների կենդանի քաշը ծնվելու պահին, նրանց ձեռք բերած քաշաճը, ինչպես նաև կենդանի քաշը գառը մորից անջատելու ժամանակ և արոտային շրջանի վերջում ստացված տվյալների անալիզը ցույց է տալիս. առաջին՝ արու գառների համեմատական մեծությունը էգերի նկատմամբ աճի ժամանակ, երկրորդ՝ բոլոր ժամանակաշրջաններում էլ վաղ ամիսներին ծնված գառներն ուշ ծնվածների համեմատությամբ ունեն բարձր քաշ, ընդ որում որքան ծնի ժամկետը ապրիլ ամսից մոտենում է հուն-

վարին, այնքան քաշի տարբերությունը մեծ է լինում, երրորդ՝ բացարձակ քաշաքանը վաղ ծնված գառների մոտ մեծ է։ Այս հանգամանքը թույլ է տալիս վերանորոգումից ավելի եղած արու և էգ գառները նույն տարում իրացնելու։ Ծնի լավագույն ժամկետների ընտրության գործում կարևոր նշանակություն ունի նաև գառների բրդատվության ցուցանիշը։

Խառնածին ոչխարների առկայության պայմաններում, գառների խուզը առաջին տարում ունի կարևոր նշանակություն։ Պրոֆեսոր Մ. Գ. Քարամյանի հետազոտությունները ցույց են տվել, որ հանրապետությունում խառնածինների մեծ մասը, չնայած իրենց բրդի միատարրությանը, պահպանել է տեղական ոչխարների ոչ ցանկալի բիոլոգիական որոշ հակասություններ, որի հետևանքով նկատվում է բրդի որոշակի կորուստ։ Հատկապես այդ նկատվում է այն մատղաշների մոտ, որոնք աշնանը չեն խուզվում, քանի որ նրանց խուզը անց է կացվում բրդի աճի 15—16 ամսական հասակում։

Ծնվելուց մինչև խուզն ընկած համեմատաբար երկար ժամկետի շնորհիվ, վաղ շրջանում ծնված գառների բուրդն զգալիորեն երկարում է և խուզի ժամանակ ապահովվում են բրդի համար գոյություն ունեցող պետական ստանդարտի պահանջները։

Բավարար բրդածածկույթի և բրդի նորմալ երկարության շնորհիվ, Սևանի գոտու Լիճքի սովխոզի վաղ ժամկետներում ծնված համարյա բոլոր գառները լրիվ խուզվել են, իսկ մարտին ծնված գառները խուզվել են 89—91 և ապրիլին ծնվածները՝ 68—83%։ Հրազդանի սովխոզի հունվարին ծնված գառները մի շարք տարիների ընթացքում խուզվել են 95—100, իսկ ապրիլին ծնվածները՝ 78—88%։

Գառների բրդատվության տվյալների հետ մեկտեղ, որոշակի հետաքրքրություն են ներկայացնում նաև բրդատվության ցուցանիշներն ավելի ավագ խմբերում։ Պարզվում է, որ վաղ ժամկետներում ծնված գառները հաջորդ տարիներում ոչ միայն պահպանում են բարձր բրդատվությունը, այլև ավելացնում են այն։

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Ոչխարների պտղաբերության և գառների մթերատվության վերաբերյալ կատարված ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ ոչխարների ծինը զարնանային ամիսներից որքան տեղափոխվում է դեպի ձմեռ (հունվար-փետրվար), այնքան հնարավորություն է ստեղծվում ապահովելու գառների անկումների ցածր տոկոսը և նրանց ավելի շատ ելքը։ Բացի այդ, վաղ ժամանակ ծնված գառներն աչքի են ընկնում մեծ կենսունակությամբ և հետագայում ձեռք են բերում բիոլոգիական ցանկալի հատկություններ։

Մատղաշների բարձր կենսունակությունը ապահովում է նաև նրանց հետագա լավ աճը։ Վաղ ծնից ստացված գառները ծնվելու պահին աչքի են ընկնում իրենց քաշով և ինչպես մայրերից անջատման ժամանակ, այնպես էլ արոտային գիրացման վերջում, արագ աճի շնորհիվ, ձեռք են բերում ավելի մեծ քաշ։

Նշված ծնից գառների քաշի ավելացումը հնարավորություն է ստեղծում նույն տարվա աշնանն իրացնելու վերանորոգումից ավելի պահվող մատղաշը,

որով մսի ընդհանուր արտադրության մեջ ավելանում է գառան մսի արտադրությունը և պակասում է ձմեռող անասունների գլխաքանակը։

Վաղ ծնված գառներն աչքի են ընկնում նաև բրդի բարձր մթերատվությամբ։ Ծնվելուց մինչև խուզն ընկած ժամանակաշրջանում նրանց բուրդն զգալիորեն երկարում է, որի շնորհիվ բոլոր գառները խուզվում են և բրդատվությամբ գերազանցում գարնանը ծնված գառներից։

Այսպիսով, ոչխարների վաղ բեղմնավորման ու վաղ ծնի կազմակերպումը զգալիորեն նպաստում է ոչխարների գլխաքանակի և գառների մթերատվության ավելացմանը։ Ոչխարների վաղ ծնի կազմակերպումը նպատակահարմար է, տնտեսապես ձեռնտու և գործնականորեն կիրառելի միջոցառում է հանրապետության կոլտնտեսությունների ու սովխոզների համար։

С. Г. КАЗАРЯН

ВЛИЯНИЕ СРОКОВ ОКОТА НА ПЛОДОВИТОСТЬ ОВЕЦ И ПРОДУКТИВНОСТЬ ЯГНЯТ

Резюме

Одним из передовых методов работы в системе мероприятий, направленных на быстрейшее увеличение численности овец и повышение их продуктивности, является проведение раннего (январь—февраль месяцы) окота овец.

Результаты исследований (1962—1966 гг.) показали, что за все годы почти во всех хозяйствах различных сельскохозяйственных зон республики, по мере передвижения окота овец с поздних (март—апрель) на ранние (январь—февраль) сроки, яловость овец уменьшается. При этом, чем больше промежуток между сроками окота, тем разность в яловости более разительна.

Выводы

Изучение плодовитости овец и продуктивности молодняка показывает, что по мере передвижения окота овец с обычных сроков—апреля и марта на февраль и январь, обеспечивается возможность значительного сокращения яловости маток, высокий процент двоен, низкий процент отхода ягнят и большой выход молодняка. Кроме этого, ягнята ранних сроков рождения отличаются большей жизненностью, чем ягнята рождения поздних сроков. Первые в дальнейшем приобретают желательные биологические качества.

Высокая жизненность молодняка ранних сроков рождения приводит к лучшему его развитию. Ранние ягнята рождаются с более высоким живым весом и как к отбивке их от матерей, так и к концу пастбищного периода имеют больший живой вес, чем поздние ягнята.

Ягнята ранних сроков рождения по сравнению с поздними выгодно отличаются и по шерстной продуктивности. К моменту стрижки шерсть у первых отрастает на достаточную длину, что позволяет почти их всех стричь. Кроме этого, настриг шерсти у фактически остригаемых ягнят ранних сроков рождения превосходит настриг ягнят поздних сроков рождения.

Таким образом, положительное влияние перемещения случки и окота овец на ранние сроки по сравнению с обычными способствует значительному увеличению поголовья овец и продуктивности молодняка. Ранний окот овец является целесообразным, экономически выгодным и практически доступным мероприятием для колхозов и совхозов республики.